ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 803- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի N 998-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2021 թվականի դեկտեմբերի 13-ի «Սուրբ Կամիլլո» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Առողջապահական և սոցիալական աջակցություն» ծրագրի մասին» N 998-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման վերնագրում՝ 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում «Սուրբ Կամիլլո» բառերը փոխարինել «Կամիլլիանների միաբանության «Ս. Կամիլլո» բառերով.

2) որոշման հավելվածի 4-րդ կետում՝ «ՍՈՒՐԲ ԿԱՄԻԼԼՈ» բառերը փոխարինել «Ս. Կամիլլո» բառերով:

2. Սահմանել, որ (Պրո. Զա) Մարդկային զարգացման և առողջության հիմնադրամի կողմից Կամիլլիանների միաբանության «Ս. Կամիլլո» բարեգործական հիմնադրամի հասցեով ուղարկված ապրանքները (1,538 տեղ, 7,170 կգ ընդհանուր քաշով, 19,172 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ՝ փոխադրման ծախսերը կազմել են 4,982 եվրո,

բեռի և բաշխման ցանկերը՝ համաձայն հավելվածի, Հյուսիսային մաքսատուն-վարչություն) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Երևան

08.11.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ